ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

«19» դեկտեմբերի 2017 թվականի № 154-Ա

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության 2017 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ 5/5/10330-17 գրությունը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով, 11-րդ հոդվածի 2-րդ մասով, «Էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում պետական տեխնիկական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 01.06.2005թ. թիվ 1045-Ն որոշման 8-րդ կետի «բ» ենթակետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով

ՀՐԱՄԱՅՈՒՄԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի էներգետիկայի պետական տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) պետ՝ Հակոբ Մանուկյանին.

1) ապահովել տեխնիկական ստուգումների իրականացման, տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ վարչական տույժ նշանակելու, ինչպես նաև տնտեսվարող սուբյեկտների մոտ ստուգումների արդյունքների բողոքարկման գործընթացների վերանայումը, դրանք համապատասխանեցնելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» և «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջներին:

2. Մշակել ստուգումների արդյունքում կազմվող ակտ-կարգադրագրերի պահանջների կատարման նկատմամբ արդյունավետ վերահսկողության կառուցակարգեր՝ դրանցում ներառելով նախազգուշացումների գործընթացը:

3. Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի պետ՝ Նարինե Սարգսյանին և Տեսչության պետ՝ Հակոբ Մանուկյանին.

1) վերանայել մարզային տեսուչների պաշտոնների անձնագրերում ամրագրված տարածաշրջանային ստուգումների իրականացման սահմանափակումը և դրանք փոփոխության ենթարկելու վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ,

2) մոտակա կառուցվածքային փոփոխությունների իրականացման ժամանակ քննարկել Տեսչությունը իրավաբանի կամ իրավաբանական ստորաբաժանման հաստիքներով համալրելու հարցը:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավար Կարեն Ղահրամանյանին:

/ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ